65. ԽԵԼԱՑԻ ԲԱԺԱՆԱՐԱՐ

Ժամանակին մարթու մեկ ուր զանգյնութին կկուրիսցուցե, յիսփն աստիճան կաղքյատանա, կմնա մեկ խավ:

Մոր կասի. - Մարե՛, մենքյ անոթի պիտի մեռնենքյ, մեյ խավ մե ի՞նչխ պիտի կշտացուցի:

- Որդի՛, - կասի, - տյու կիհես. ի՞նչխ կիտես՝ արա:

Կասի. - Մարե՛, պե էսա խավ իփի, տանեմ թակավորուն, խո՛ քյաւքյ չուտե խետ ուր խոր, զի պամ կուտա, կտառնամ:

Մեր կիփի: Խավու գյլեռխ վերեն կիփի: Տնի չանթկի մեչ իփած խավ, կառնի կէրթն մո թակավոր:

Տիսնա՝ թակավոր նստե, մեյ վանզիր մեյ կողն ի նստե, մեյ վանզիր՝ էն մեկէլ կող:

Թամսանդա կանի թակավորուն, խավ կտնի ամանջ:

Կասի. - Իտա ի՞նչ ես պիրե:

Կասի. - Թակավոր ապրած կենա, քյե ամեն իմ պիրե:

- Է՞հ, - կասի, - քյո պիրած ամեէն վեր մե կիսի խենքյ:

Մարթ պիրի խավու գյլեռխ կտրի, կուտա թակավորուն, մեյ թև կուտա մեյ վազրին, մեյ թև կուտա մեյ վանզրին: Խավու ջանդանյն էլ կթանի ուր չանթիկ:

Թակավոր կասի. - Ի՞նչ արիր, պերած ադիեն տարար խենքյե կիսի, ե՞է:

Կասի. - Կիսիցի է:

Կասի. - Թակավոր ապրած կենաս, թակավոր որ կա՝ գյլեռխ ի: Գյլեռխ քյե տվի: Վանզիրներ որ կան՝ քյո թիվքյերն են: Թիվքյերն էլ ինոնց տվիցի: Մենքյ էլ որ կանքյ՝ քյո ժողովուրդը, քյո ջանդանյն ենքյ, ջանդանյն էլ առիցի զիկ, ես իմ կնիկ ուտենքյ, քյեֆ անենքյ, թակավորուն դուվա անենքյ:

Թակավոր կխանի ճանգյմ ոսկի կուտա, կասի. - Դե, կնա:

Ճանմբանխ ոսկին ծեռ խաղալեն կուգյան: Վազիրմ իսոր կպատահի, կասի. - Խենթ մարթու ծեռ էսա փանրեն յու՞ստ ի, խետ կխաղա, - կմոտոխասնա կասի. - Պանրև, ախպեր:

Կասի. - Աստծու պանրին:

Կասի. - Էտա փանրեն յու՞ստ ի, խետ կխաղա, թանփես, տո՛ խայ:

Կասի. - Վալա՛, խավմ պիրիցի իփիցի, տարա տվիցի թակավորուն, աղեա առիցի:

Վնզիր կընցնի կէրթա: Ինքյ ուրեն կասի՝ որ ըսկուն ի, ես կազմ իփեմ տանեմ, ավելի կառնեմ:

Կընի կազ կիփի, երկրորթ օր կտանի թակավորուն:

Թակավոր նստե ուր տեղ, մեյ վնզիր՝ մեյ կող, մեյ վնզիր՝ մեյ կող:

Թնմմանդեմ կէնի, իփած կազ կտնի թակավորու առաջ:

- Էտ ի՞նչ ես պիրե, - կասի թակավոր:

Կասի. - Թակավոր ապրած կենաս, նվեր եմ պիրե քյե:

- Է՞ռ, - կասի, - պիրածդ խալաթ կիսի վեր մե:

Մարթ կամչնա, ետ կքյաշվի, չկանա:

Թակավոր կասի. - Էրեյվան մարթ որտե՞ղն ի, կանչեքյ, թո գյան, կիսի: Իսա չկիտե:

Կէրթանն էտ ախքյատ մարթ կկանչեն, պիրեն:

Կասի. - Իսա մարթ նվեր ի պիրե, չկանա կիսե, արե՛ կիսի:

Պիրի կտրի, գյլեոխ կուտա թակավորուն, մեյ թև կուտա մեյ վնզրին, մեյ թև կուտա՝ մեյ վնգրին:

Ջանդնյ կթալի ուր չանթեկ:

Թակավոր կասի. - Ի՞նչ արիցիր, կիսի եէ՞:

Կասի. - Կիսիցի՛:

Կասի. - Ի՞նչխ կիսիցիր, ասա խենքյ:

Կասի. - Մեր թակավոր որ կա՝ մեր գյլոխն ի, գյլոխ տվեցի թակավորուն, վնզիր որ կան՝ քյո թիվքյերն են, թիվքյերն՝ ուրանց տվիցի: Մենքյ էլ որ կանքյ՝ քյո ջանղայն ենքյ: Տանենքյ յիրկուս՝ ես իմ կնիկ ուտենքյ, թակավորուն դուվա անենքյ:

Կասի. - Ապա էսա կազ պիրողին փայ չխանիցիր:

Կասի. - Ինոր քյաոսուն փետ զնրկեքյ. ինոր փայն էլ էն ի: Ես աղքյատ, խաց պնմ չինի իմ ծեռ, ասի պնմ տանեմ թակավորուն, զի խարջլըղ տա, էն զնանգյին ի, վնզիր ի, թյուջար ի, ինոր ի՞նչ պակաս ի, որ իփած կազ իպե մեր թակավորուն: Թակավոր կարո՞տ ի ինոր կազին: Ինոր ճնղ քյաոսուն փետ ի, զնրկեքյ, խանեքյ տյուս:

Թակավոր իպե ճանգյմ ոսկի իտուր տղին, քյաոսուն փետ էլ զնրկեց վնգրին, էխան տյուս: